ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2024 թվականի N 55 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N 1324-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 24-րդ և 25-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշման հավելվածի «Չափորոշիչ VIII Երեխայի մանր ծախսերը» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չափորոշիչ VIII Երեխայի մանր ծախսերը

16. Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնը, ինչպես նաև մանկատունը շուրջօրյա խնամք ստացող ուսումնական հաստատությունում սովորող և միաժամանակ ուսումնական հաստատություն հաճախող երեխային ապահովում է

անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով: Երեխա-ների հետ աշխատող մասնագետները սովորեցնում են երեխային խելամիտ և արդյունավետ օգտագործել ունեցած գումարը:

16.1 Անձնական մանր ծախսերի համար՝

1) 6-9 տարեկան երեխաներին տրվում է ամսական 6.0 հազ. դրամ.

2) 10-15 տարեկան երեխաներին տրվում է ամսական 12.0 հազ. դրամ.

3) 16-18 տարեկան երեխաներին տրվում է ամսական 15.0 հազ. դրամ:

16.2. Շուրջօրյա խնամք ստացող երեխայի անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

16.3. Երեխայի անձնական մանր ծախսերն իրականացվում են հետևյալ կերպ՝

1) 6-9 տարեկան երեխաների համար անձնական մանր ծախսերն իրականացնում է տնօրենի կողմից լիազորված անձը՝ հաշվի առնելով երեխայի շահերը և ցանկությունները.

2) 10-18 տարեկան երեխաներն անձնական մանր ծախսերն իրականացնում են և գումարը տնօրինում են ինքնուրույն՝ խորհրդակցելով տնօրենի կողմից լիազորված անձի հետ:

16.4. Անձնական մանր ծախսերի համար նախատեսված գումարի վճարումը դադարեցվում է երեխայի՝ հաստատությունից դուրս գրվելու (կենսաբանական ընտանիք վերադառնալու կամ որդեգրման կամ խնամատար, խնամակալ կամ հոգաբարձու ընտանիքում տեղավորվելու, 18 տարին լրանալու կապակցությամբ) կամ այլ խնամքի հաստատություն կամ այլընտրանքային խնամքի այլ եղանակում ընդգրկվելու դեպքում:

16.5. Մանկատունն իր մոտ շուրջօրյա խնամք ստացող երեխայի հրատապ և անհապաղ բավարարման ենթակա կարիքները (երեխայի ծննդյան տարեդարձի ծախսեր, համադասարանցիների, ընկերների ծննդյան տարեդարձերի ծախսեր, դպրոցական էքսկուրսիաների ծախսեր և այլն) հոգալու համար տարեկան առավելագույնը 1,200.0 հազ. դրամի չափով կանխիկ շրջանառության գործարքներ

է իրականացում՝ համապատասխան ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայությամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված հաստատության բյուջետային տարվա ծախսերի նախահաշվով հաստատված «այլ ծախսեր» ծախսային հոդվածի հաշվին:

16.6. Ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրող կենտրոններ հաճախող հաշմանդամություն ունեցող և կենտրոնից առնվազն 500 մետր հեռավորությամբ բնակվող տրանսպորտից օգտվող երեխաների համար կենտրոնն ապահովում է տրանսպորտի ծախսերի դրամական փոխհատուցում օրական նվազագույնը՝ 200 դրամի և առավելագույնը՝ 400 դրամի չափով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ